

18380

ԱՂԵՐ - Գրիգորյան էՏ

ԱՂԵՐ ԿԱՏ ՄԱԻ

Ե. 1882.

891.99

S-38

# ՍԷՐ ԿԱՄ ՄԱՀ

ԵՐԳԱԽԱՌՆ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

ՄԷԿ ԱՐԱՐՈՒԱՆՈՎ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ

ԷՍԻՆԻ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ

ԵՐԵՒԱՆ

Է՝ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ

1882

622-102

Дозволено Цензурою. 7 Июля 1882 г. Тифлисъ.



924-2013

Типографія Эмина Теръ-Григорянцъ въ Эривани, на углу Астафьевской  
и Бебутовской улицъ.

ՄԻՐ ՎԱՐ ՄԱՀ



## ԽԱՂԱՑՈՂ ԱՆՁԻՆՔ

ԹԱԳՈՒՀԻ ՅՈՎՍԷՓԵԱՆ, այլի միջահասակ կին, աղա-  
տամիտ. մասնակցող թատրոնական սիրողների խմբի:

ԱՐՏԻՐ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ, թեթևամիտ և շատ երևակայող  
երիտասարդ, մասնակցող թատրոնական սիրողների  
խմբի. 21 տարեկան:

ԳՐԻԳՈՐ ՅԱԿՈՎԲԵԱՆ, արտիստի հայրը. միջահասակ և  
միջակ հարստության տեղ աստիճանաւոր:

ՍԷՐ ԿԱՄ ՄԱՀ

ԵՐԳԱԽԱՌ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

ՍԷԿ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ



Եսարանը ներկայացնում է  
Թագուհի Յովսէփեանի  
տան մէջ մի համեստ սե-  
նեակ. խորքում դուռը.  
աջ լուսամուտներ: Սե-  
նեակը զարդարուած է աթոռներով,  
մի փոքրիկ, բայց մասամբ խախտու  
թախտով, զորդով ծածկուած, պա-  
տի հայելիով և մի թեթև դիւա-

նիով, որի առաջ դրուած է բոլորակ  
սեղան:

(Վարպետը բարձրանում է. Տիկին Յովսէփեանը նստած է դիւանի վերայ, իսկ մի փոքր հեռու, դէմ առ դէմ կանգնած է Արտուրը, պոսանքն աչքերին: Երկուքն էլ չափազանց սիրտց վրդովված, անընդհատ նայում են իրար երեսի: Մի րոպէ միջոց):

ՏԵՍԻՆ Ա

Տ. ՅՈՎԱԼՓԵԱՆ և ԱՐՏՈՒՐ

ԱՐՏՈՒՐ \*) , չօքելով տիկնոջ առաջ:

Վերջապէ՛ս, տիկին, ես ձեզ սիրում եմ և  
խնդրում եմ ձեզնից փոխադարձ սէր:

Տ. ՅՈՎԱԼՓԵԱՆ

Ա՛ն... ինչպէս կարելի է... ինչպէս կարելի  
է, պ. Արտուր:

ԱՐՏՈՒՐ

Շատ լաւ կարելի է, տիկին... Մի՞թէ արժանի  
չեմ ձեր սիրոյն:

Տ. ՅՈՎԱԼՓԵԱՆ

Վե՛ր կացէք... շո՛ւտ վեր կացէք խնդրեմ:  
այդ ի՞նչ կնշանակէ ձեր արածը... Ես... ա՛ն...

\*) Արտուրի խոսակցութիւնը և ձևերը, մինչև երկրորդ տե-  
սիլը — թատերանակն են. նա ամեն մի նախադասութիւն ար-  
տասանելիս, կամենում է մի առանձին և դրաւիչ ուղարու-  
թիւն թողնել Տիկին Յովսէփեանի վերայ, իսկ հօր անունը  
բնական շփոթում է:

ԱՐՏՈՒՐ

Ո՛չ, չեմ վեր կենայ... մինչև... չլսեմ ձեր  
համաձայնութիւնը: Ես ձեզ սիրում եմ և  
խնդրում եմ ձեր ձեռքը:

Տ. ՅՈՎԱԼՓԵԱՆ

Այո .. ես շատ ուրախ եմ... բայց...

ԱՐՏՈՒՐ

Ուրա՛խ էք... դուք ուրա՛խ էք... ուրեմն...

Տ. ՅՈՎԱԼՓԵԱՆ

Ան, չէ, չէ... այդ լինելու բան չէ: Վե՛ր  
կացէք, վեր կացէք խնդրեմ... լսեցէք ինձ:

ԱՐՏՈՒՐ

Ոչ, ես ձեզ սիրում եմ... Ես ձեր համաձայ-  
նութիւնն եմ խնդրում:

Տ. ՅՈՎԱԼՓԵԱՆ

Ան, հէր իմ... Ես ևս ձեզ...

ԱՐՏՈՒՐ

Ուրեմն դուք ևս ինձ սիրում էք:

Տ. ՅՈՎԱԼՓԵԱՆ

Ո՛չ, ո՛չ... այդ անկարելի բան է:

ԱՐՏԻՒՐ, կրկին չոքելով:

Տի'կին, տուեցէք ինձ... հասկանո՞ւմ էք...  
ես ձեզ մինչև այստեղ (յոյս ասելով որդիք) սի-  
րում եմ... և եթէ չէք կամենալ մահս՝ մի  
մերժէք ինձ ձեր ձեռքից:

Տ. ՅՈՎԱԷՓԵԱՆ

Արտիւր ջան, Արտիւր ջան... վեր կաց և  
մանրամասնօրէն խօսենք մեր սիրոյ... այսինքն  
այդ հարցի մասին:

ԱՐՏԻՒՐ, օրտով:

Խօսենք, այո՛, խօսենք այս հարցի մասին.  
բայց ես չոքած, իսկ դուք նստած... որովհե-  
տե՛ եթէ ես չլսեմ ձեր համաձայնութիւնը,  
կանգնել չեմ կարող... ծնկներս չեն ենթար-  
կուիլ իմ իրաւանց:

Տ. ՅՈՎԱԷՓԵԱՆ

Եթէ այդպէս է... ես էլ քեզ եմ սիրում,  
Արտիւր և տալիս եմ քեզ իմ ձեռքս... (ասելով է)  
Ա՛խ... այս ինչ արեցի ես...

ԱՐՏԻՒՐ, խկոյն բռնելով ձեռքը և մի քանի անգամ համ-  
բուրելով, վեր է թռչում:

Սիրո՞ւմ ես... սիրո՞ւմ ես... վերջապէ՛ս...

Տ. ՅՈՎԱԷՓԵԱՆ

Բայց, Արտիւր, զիտե՞ն դորա հետեանքը:

ԱՐՏԻՒՐ

Ես ոչինչ չգիտեմ և իմանալու կարօտ չեմ.  
ուրեմն թող տուր ինձ առաջարկել մատանիս  
և ստանալ քեզանից նորա փոխարէն... որ լի-  
նի մեր ամուսնութեան նշանը:

Տ. ՅՈՎԱԷՓԵԱՆ

Բայց ես քեզանից մեծ...

ԱՐՏԻՒՐ

Ես ոչինչ բայցեր չեմ կամենում լսել:

Տ. ՅՈՎԱԷՓԵԱՆ

Եթէ այդպէս է՝ առ և իմս. բայց լա՛ւ  
հասկացիր քո արածի նշանակութիւնը: (Տալիս  
է հասանքն):

ԱՐՏԻՒՐ, իբր խելով ընդունումէ և, շուտ շուտ համ-  
բուրելով, ասումէ:

Շնորհակալ եմ... շնորհակալ եմ... շնորհա-  
կալ եմ... (դնումէ հասանքն հասը և համբուրումէ  
որէնք չեմք) ուրեմն... համբոյր, համբոյր  
շնորհաւորութեան:

(Համբոյր և զգուանք):

Տ. ՅՈՎԱԷՓԵԱՆ, երգում:

Քո ժպտադէմ հայեացքներով  
ինձ մեծ յոյսեր տուեցիր.

Արտիս սէրը քիչ վառօդով  
Բորբոքեցիր, վառեցիր:

Քո սիրավառ ձևերովդ  
Արտիս մէջ սիւն դրեցիր.  
Քաղցրաշշուենջ բառերովդ  
Ինձ շունչ տուիր... գերեցիր:

Ինձ յանձնեցիր սիրտդ, հոգիդ...  
Այդ արեցիր ակներև.  
Օ... քեզ համար չեմ խնայիլ  
Ոչ կեանք, ոչ լոյս, ոչ արև:

Ահա իմ զգացմունքս դէպի քեզ, Արտիւր  
Ջան... հիմա հասար քո նպատակիդ կատա-  
րելագէս... բայց ասա տեսնեմ քո հօր պա-  
տասխանը ինչպէս պիտի տաս, որոյ համար  
հենց այս րոպէիս, կարծես, կասկած ընկաւ  
սիրտս:

ԱՐՏԻՒՐ

Ի՞նչ պատասխան. կասեմ... սիրեցի և նշա-  
նուեցի. էլ ի՞նչ կայ:

Տ. ՅՈՎԱԷՓԵԱՆ

Իսկ դու նորանից չե՞ս վախենում:

ԱՐՏԻՒՐ

Ո՞վ, ե՞ս... այսինքն... զիտէք... բայց չէ՛, ին-  
չո՞ւ պիտի վախենամ:

Տ. ՅՈՎԱԷՓԵԱՆ

Իսկ եթէ չհամաձայնե՞ց:

ԱՐՏԻՒՐ

Ինչպէս թէ չհամաձայնեց... ա՛յ քեզ բան:  
Այդպէս էլ բան կարող է լինե՞լ:

Տ. ՅՈՎԱԷՓԵԱՆ

Չհամաձայնե՞լ՝ չհամաձայնեց — ի՞նչ պիտի  
անես:

ԱՐՏԻՒՐ

Վա՛: Այդպիսի բանին էլ չեն համաձայնի՞:  
Վերջապէս ես պատկու՜մ եմ ինձ համար, ոչ  
թէ հօրս:

Տ. ՅՈՎԱԷՓԵԱՆ

Իսկ եթէ արգելե՞ց:

ԱՐՏԻՒՐ

Ինչպէս կամենում է — արգելի. ո՞վ է լսողը:  
Շատ հեշտ եմ ձեռք բերել քե՞զ:

Տ. ՅՈՎԱԷՓԵԱՆ

Բայց նա կարող է ամեն կերպով քեզ խոչըն-  
դոտ լինել:

ԱՐՏԻՒՐ

Նա՛... այո՛... բայց սիրոյ դէմ ի՞նչ խոչըն-  
դոտ: Ձե՛ն յիշում Մէր և նախապաշարմունքի՞  
մէջ՝ թէ ինչպէս լեւին պսակվումէ Սիւլեվօնի  
հետ, չնայելով որ նորա հայր լօրդը ինչպէս  
էր արգելում և ինչ հնարքներ էր գործ դնում  
նորա դէմ. չե՛ն յիշում Մէհրիմէին՝ թէ նա  
ինչպէս ճակատ առ ճակատ կանգնեց իւր հօր  
դէմ և պահանջեց իւր սիրահարին և վերջա-  
պէս՝ ինչ ինչ անելուց յետոյ՝ մահացաւ, խմեց  
թոյն: Քանի՞ այդպիսի օրինակների ենք պատա-  
հել մենք թատրոնի բեմում: Չմոռանաս նաև  
որ նոքա աղջիկներ էին, իսկ ես — տղամարդ.  
հայրն ինչ է իմ պէս մէկի առաջ, վերջապէս  
ի՞նչ նախապաշարմունք պիտի լինի հօրս կող-  
մից:

Տ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

Իսկ եթէ արգելե՞ց, այն ժամանակ ինչ պի-  
տի անես: Չմոռանաս, որ մենք տմեն բան ար-  
դէն վերջացրել ենք:

ԱՐՏԻՒՐ

Օ՛... Այն ժամանակ կառաջարկեմ նորան եր-  
կու բան. — սէր կամ մահ:

Տ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

Շատ լաւ, շատ լաւ. դորա համար ես կրկին  
տալիս եմ քեզ իմ ձեռքս և համբուրումեմ  
քեզ (համբոյք). իսկ եթէ պարտազանց դռնուե-  
ցիր, այն ժամանակ չմոռանաս՝ որ ես Օտելլօի  
դերը կխաղամ: Յիշում ես Օտելլօյի այն խօսքը,  
երբ մօտեցած իւր սիրելի կնոջ մահձին՝ նորա  
քնած ժամանակ, ասաց. «Դեպդեմօնս, Դեղդե-  
մօնս, յառաջ քան իմ սրով հարուածելս քեզ,  
համբուրումեմ քեզ»:

ԱՐՏԻՒՐ

Այո՛, այո՛, յիշումեմ:

Տ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

Այնպէս և ես կհարուածեմ քեզ: Բայց չմո-  
ռանաս նաև՝ որ կանացի վեհժը շատ անողորմ  
կլինի:

ԱՐՏԻՒՐ

Բայց չէ՞ որ առաջ քան հարուածելը, պի-  
տի համբուրես ինձ:

Տ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

Այո՛ և անպատճառ:

ԱՐՏԻՒՐ

Օօօ... Այն ժամանակ, ստանալով համրոյրդ,  
նշանակութիւն չի ունենալ հարուածդ ինձ  
համար:

Տ. ՅՈՎԱԷՓԵԱՆ

Լաւ. տեսնենք:

ԱՐՏԻՒՐ

Այո՛, այո՛, կտեսնես. կտեսնես և կիմանաս  
թէ ես ինչ եմ: Գու՛ մի՞ թէ կարծում ես՝ ինձ  
վերայ նշանակութիւն կունենան իմ հօր ար-  
գելքները. ես՝ ճակատ առ ճակատ նորա հետ  
կրանախօսեմ, և այն ժամանակ դու կիմանաս՝  
թէ ես ինչ եմ, նամանաւանդ, երբ այդ արգելք-  
ները քեզ պիտի վերաբերին... Օօօ... Գու՛  
զիտես՝ թէ ես ինչպէս կաշառպանեմ քեզ նո-  
րա մօտ:

Տ. ՅՈՎԱԷՓԵԱՆ

Այսինքն ինձ չպիտի պաշտպանես՝ այլ քեզ,  
որովհետեւ՝ եթէ տեղն ընկնելու լինի՝ ես ինքս  
ինձ կաշառպանեմ. ես գիտեմ ում հետ ինչպէս  
պէտքէ վարուել: Իսկ դու զգուշացի՛ր քեզանից,  
որովհետեւ, ես որքան նկատումեմ, վախենում  
ես քո հօրից և վախենում ես շատ:

ԱՐՏԻՒՐ

Ո՛վ, ե՛ս. ե՛ս եմ վախենում իմ հօրից... Գու՛  
զիտես որ՝ ո՛չ թէ միայն ես, այլ ուրիշներն էլ  
չեն վախենում նորանից... Իմ հօրս տարեկան  
եղբայրս էլ մինչև անգամ չէ վախենում նորա-  
նից... Ախ, ինչե՛ք ես ասում, Թագուհիս... Գու՛  
ինչե՛ց ես այդպէս գաղափար կազմում իմ վե-  
րայ:

Տ. ՅՈՎԱԷՓԵԱՆ

Քո շարժումներնիրից...

ԱՐՏԻՒՐ, չսերով և շարունակելով:

Եւ նամանաւանդ այսպիսի հանգամանքով,  
որ ինձ համար մահու և կեանքի խնդիր է...  
Օ... ես... ես... որ տեղն ընկնի—կջարդեմ,  
կփշրեմ... ես... ջէ, հոգիս, դու գեռ ինձ չես  
ձանաչում:

Տ. ՅՈՎԱԷՓԵԱՆ

Լաւ, լաւ, կտեսնենք:

ԱՐՏԻՒՐ

Այո, այո, կտեսնենք:

Տ. ՅՈՎԱԷՓԵԱՆ

Իսկ եթէ հայրդ քեզ զրկեց իւր ժառանգու-  
թիւնից, այն ժամանակ ինչով կապրես:

ԱՐՏԻԻՐ

Այն ժամանակ... բայց չէ՛, ինչպէս կարող է լինել:

Տ. ՅՈՎԱԼՓԵԱՆ

Իսկ եթէ եղա՞ւ. պատահունք է:

ԱՐՏԻԻՐ

Այն ժամանակ... (Ժողջ):

Այն ժամանակ ես կհանեմ

Եւրոպական շորերս,

Այն ժամանակ վայր կընեմ

Իմ թանկագին գլխարկս:

Վայր կընեմ նաև քթիս

Այս ոսկեպատ պանսոնէս.

Կշարտեմ ես շատ հեռու

Սիրուն փայտ իմ ձեռքէս:

Այն ժամանակ ցնցոտիներ

Ուրախ սրտով կհագնեմ

Եւ օրական մշակութեամբ՝

Քեզ, սիրելի՛ս, կպահեմ:

Հիմա, հասկացա՞ր: Հասկացա՞ր, որ քեզ համար գլուխս յետ դրած ունեմ Գիտես, որ այս բոլորը քեզ համար, միայն քեզ համար պատրաստ եմ անելու:

Տ. ՅՈՎԱԼՓԵԱՆ

Հա՛: Որեմն եթէ այդպէ՛ս է. Արտիւր ջան, դու երբէք այդ օրը չես տեսնիլ: Իմ կարողութիւնս շատ և շատ բաւական է մեզ ապրեցնելու համար, իսկ ինչ որ էլ կաշխատես, այն գործ կընես քո արտաքին վայելչութեանց համար: Շօրեր կունենաս ամենաթանկագին կտորներից. գլխարկիդ տեղ՝ կընես ցիլինդր. մի պանսնէի տեղ՝ կընես տասն և մէկը. մինչև անգամ ձեռքիդ փայտն էլ արծաթից ձուլել կտաս և այդպէ՛ս՝ կհանես քո թշնամիների աչքերը:

ԱՐՏԻԻՐ

Թշնամիներ... ի՞նչ թշնամիներ... բոլորին էլ կջարդեմ, կփշրեմ, ի՞նչ թշնամիներ կարող են իմ դէմ լեզու հանել, ի՞նչ հայր կարող է ինձ արգելք պատճառել. բոլորին էլ մի տեղ կժողովեմ, լեզուները արմատից կկտրեմ, քթները կը ջարդեմ, իրարով կտամ և քեզ համար յաղթական անուն կժառանգեմ, որով կը պսակեմ ինձ՝ և այն պսակը կբերեմ և կգցեմ ոտերիդ տակը... Երջանիկ՛ի րոպէ:

Տ. ՅՈՎԱԼՓԵԱՆ

Ապրե՛ս. ապրե՛ս, Արտիւր: Դորա համար

924-2013



հենց ես կամենում եմ համբուրել քեզ (համբար)։  
Ես հիմայ հասկանում եմ, որ այդպէս էլ կլինես։

ԱՐՏԻՒՐ

Ա՛խ, կուզէի՝ որ հայրս հենց հիմայ այստեղ  
լինէր և ապացուցանէի քեզ՝ թէ ես ինչ կա-  
նէի... ձեռաց կ[թեպրէի \*], ճշմարիտ կ[թեպ-  
րէի... հաւի պէս կաշուահան կանէի, եթէ  
միայն այդպիսի մի բան, կամ արգելք դնէր ա-  
ռաջս։ Իսկ միւս մանր մունր ինտրիգանտներին  
— է՛հ, ասելն աւելորդ է. հարկաւոր է միայն փշել՝  
և ամենքն էլ ալիւրի նման կ[թուշեն օղը և կան-  
յայտանան նորա անեղր ծովի մէջ։

Տ. ՅՈՎԱԷՓԵԱՆ,

Այն ժամանակ մենք թատրոնական ներկայա-  
ցումներս կշատացնենք. բարեգործական նպա-  
տակների համար շատ փող կժողովենք. ամեն տեղ  
մեր անունները կբարձրացնենք. «Մեղու», «Մշակ»,  
և «Արձագանք» մեզանով միայն կպարապեն։  
Օ՛հ, ինչպէս լաւ կլինի։

ԱՐՏԻՒՐ

Օ՛... այն ժամանակ ամբողջ աշխարհքը մեզ  
վերայ կխօսայ, մեր բարեգործութիւնների վե-

\*) Փետտել բառից։

րայ մասնացոյց կլինի և այդպիսով մեր անու-  
նը կտարածուի, կ[թեպա՛] ամեն տեղ, ամենքը  
կիմանան, ամենքը կճանաչեն մեզ... (Խըչ) Բայց  
զարմանալի՛ բան. տեսնու՛մես, ինչպէս մենք մի-  
ասիրտ, միակամ, միազօր, միափառ և միախոհ  
ենք... և ի՞նչպէս հանդիպեցանք իրար։ Այո՛,  
հանդիպեցանք մենք մեր զեղիցիկ խաղերով բե-  
մի վերայ (Մեղչ)։ Եւ ո՞վ է մեզանից այս տեղ  
լաւ խաղացողը. ասա տեսնեմ, հոգեակս, մէկն  
ասա, որ մեզ հետ հաւասարուի. հենց բեմ ենք  
դուրս գալիս թէ չէ՝ կատարվում է այն՝ որ զը-  
րուած է... ԸԸ... չգիտեմ որտեղ. «Յերեւիլն  
արեգական՝ կորնչին աստեղք»։

Տ. ՅՈՎԱԷՓԵԱՆ, որա՛խ։

Ի հարկէ, շատ պարզ է։ Ապա երգենք մեր  
յօրինած երգը։

ԱՐՏԻՒՐ, ինքնասիրութեամբ։

Երգենք։

Միասին երգեա՛մ են։

Մեր խաղերով զարմացրինք

Ամբողջ քաղաքը. —

Չեղք բերեցինք մենք լիովն

Մեր նպատակը։

Բեմին միայն մենք ենք տալիս

Նշանակու թիւն.

Բեմը առանց մեզ — ոչինչ է,

Չունի՛ զօրութիւն:

Հանդիսականք թէ՛ և մեզի

Չեն ծափահարում,

Բայց պարզ է. մեզ ընդունում են

Իւրեանց սրտերում:

Մե՛նք ենք տեղոյս բեմի զարդը —

Մեզնով է խրոխտում,

Մեր անունով, մեր խաղերով

Է նա պարծենում:

Տ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

Եւ շատ ուղիղ է: Ասա՛ տեսնեմ, Արտիւր  
Ջան, այն խաղ էր որ խաղաց «Արդիւնաւոր  
Պաշտօնի» մէջ տիկին Վասակեանը՝ ֆելիսատա  
Գերասիմովնայի դերը, կամ օր. Հայկանուշը-Պօլի-  
նայի դերը և կամ օր. Գայիանէն-Իւլինկայի դերը,  
թէ՛ և շուտ շուտ ծափահարութիւն էին առա-  
նում. — փչացրի՛ն, բոլորովին փչացրին:

ԱՐՏԻՒՐ

Ի հարկէ, ի հարկէ: Հենց վերցրու նոյն իսկ  
գեներալի դերը, այնպէս պէտքէ խաղացուէ՛ր...  
կամ Իւսովի դերը... միթէ կարելի՞ էր այնպի-

սի խաղերով դուրս գալ բեմ. իսկ Հանդիսական-  
քը ծափահարում էին և այն, ինչպէս քեզ ա-  
սել եմ, միայն նոցա խրախուսելու համար:  
Բայց տեսնում եմ՝ մեզ — բոլորովին ինչո՛ւ, ո-  
րովհետեւ մեր խաղերը ամեն ծափահարու-  
թիւններից և գովասանքներից վեր են դասում:

Տ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

Բայց տեսա՛ր, ես ինչպէս խաղացի տիկին  
Վիշնէվսկայի դերը... ո՛րպիսի լռութիւն և  
ուշկնդրութիւն էր թափաւորում հանդիսական-  
ների մէջ:

ԱՐՏԻՒՐ

Օօօ... ամենքն էլ հիացան: Ես է՛լ հիացայ:  
Հենց այդ էր պատճառը, որ որոշացի, վճռեցի քո  
վերայ պսակուել: Եւ փառք Աստուծոյ, որ դու  
էլ չմերժեցիր:

Տ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

Ա՛խ, ինչպէս մերժէի, Արտուշիկ Ջան, երբ  
ինձ բոլորովին գրաւեցիր, նա՛մանաւանդ Քաղո-  
վի դեր կատարելու ժամանակ: Պէտքէ ասել, որ  
դու հասարակ հողեղէն չես, այլ — տաղանդ,  
գեներալ... մի խօսքով կատարելութիւն: Քաղովի  
դերը...

ԱՐՏԻԻՐ

Օ... հոգեակ ջան. ժաղովի անունը մի  
տուր, թէ չէ ես, համարեա, ինձ կորցնում եմ:  
Երանի թէ ամենայն շաբաթ հենց „Արդիւնա-  
ւոր պաշտօնը“ տային՝ որ ես ժաղովի դերը  
խաղայի: Յիշում ես, Թագուհի ջան, այն երգը,  
որ երգեցի չորրորդ գործողութեան մէջ:

Տ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

Օ... ինչպէս չէ. հիանալի էր:

ԱՐՏԻԻՐ

Բայց գիտե՞ս. իսկապէս այն երգը չէ հեղի-  
նակի գրածը. նա մի ուրիշ բան է. ես էլ, չե-  
մանալով նորա ձայնը, երգեցի այս, հենց ու-  
սերէն և, ի հարկէ, հանդիսականներից ոչ ոք,  
ոչինչ չհասկացաւ. կարծեցին թէ հենց այնպէս  
էլ պէտք էր: (Երգում է ձեռնադրող և այնպէս  
է չհասկանալով, ինչպէս բեմէ վերայ):

„Слети къ намъ, тихій вечеръ,

На мирныя поля;

Тебѣ поемъ мы пѣсню,

Вечерняя заря.“

Եւ յիշում ես ինչպէս գեղեցիկ էֆֆէկտ ու-  
նեցաւ ամենքն էլ՝ զմայլեցին վերաս: (Նոյն)

Եւ անտիւր տառայ բառերի երգումն առելի ոգեւորում  
և նշնայէ բեմայն չեալ որով):

Տրա լի լա լամ, լարա լամ

Տրարի լարամ, լա լամ

Տրամ տրամ տրամ տրամ, լարարամ

Տրարիլա լամ, տրամ տրամ:

Տ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

Նատ, շատ գեղեցիկ էր և գրաւիչ:

ԱՐՏԻԻՐ

Հենց այդ էր պատճառը, որ գրաւիչ էր:  
Օ... եթէ իմանայիր քանի քանի աչքեր լի  
ջերմ համակրութեամբ ուղղուած էին վերաս...  
եւ այդ նկատումէի բեմից, ինչպէս և Աիւլեվո-  
նը նկատեց լոժայի մէջ՝ լիւրիւն և ուշադնաց  
եղաւ: Հանդիսականների մէջ որքան օրիորդներ  
կային, բոլորն էլ արտասուքը աչքերին՝ նա-  
յում էին վերաս և նոցանից ամեն մէկը, երեւի,  
ինձ իւր իդէալն էր կարծում... Բայց այդ մի-  
ջոցին... իմ ուշքս գրաւուած էր մի ուրիշ ա-  
ռարկայով, մի ուրիշ իդէալով... իմ միտքս ըզ-  
բաղուած էր նորանով և նա...

Տ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

Բայց ո՞վ էր այդ երջանիկը, Արտուշա ջան:

ԱՐՏԻՒՐ

Ո՞վ էր... Ապա վճռիր այդ հանելուկը: Յա-  
երեակայեկնք թէ Ժադոյնս եմ, իսկ դու Պօլի-  
նան ե, երբ թէ, բեմի վերայ խաղում ենք. ապա  
վճռիր այդ հանելուկը, բայց չմոռանաս, որ ե-  
թէ վճռեցիր, իմացար, դուար իմ իղէալիս... ես  
քեզ կվարձատրեմ:

Տ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

Ինչո՞վ:

ԱՐՏԻՒՐ

Այդ էլ նոր հանելուկ: Ուրեմն այդ էլ իմա-  
ցիր:

Տ. ՅՈՎՍԷՓԵԱՆ, մի փոքր մտածելուց յետոյ:

Ես չէ՞ի արդեօք իղէալդ, Արտուշկա ջան:

ԱՐՏԻՒՐ

Յօօ... իմացար, իմացար (համբարում):

Տ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

Ուրեմն երկրորդ հանելուկդ էլ իմացայ:

ԱՐՏԻՒՐ

Ապա, ապա:

Տ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

Իմ վարձս— համարյոք էր:

ԱՐՏԻՒՐ, ծիծաղելով և ծափ տալով տրախոթիւնից:

Bravo! Bravo! Bravissimo! Ուրեմն վարձդ,  
այսինքն համարյոք պիտի լինի bis! (համբար):

Տ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

Արաիւր ջան, յանկարծ եթէ այս լուպէիս  
հայրդ ներս մանէր, ի՞նչ կանէիր:

ԱՐՏԻՒՐ

Հը... հայրս... Ե, թող ի սէր Աստուծոյ հօրս  
իր տեղը... Ի՞նչ պիտի անէի... եթէ հակա-  
ռակէր՝ այն ժամանակ...

Նախ կլննդրեմ, նախ կաղաչեմ

Թող տայ ինձի, չարգիլի,

Իմ վիհ, աղնիւ զգացմունքիս

Նա խոչնդոտ չլինի:

Իսկ երբ որ նա հակառակեց,

Խօսքս անգամ չլսեց

Եւ աղաչանք— պաղատանքս

Նորա գութը չշարժեց,

Այն ժամանակ, ես նորանից

Չունեմ երկիւղ, չունեմ ահ,

Հաստատապէս կառաջարկեմ,

Որ ընտրի ինձ սէր կամ մահ:

Իսկ եթէ այդ էլ չներգործեց, այն ժամանակ  
ես նորա հետ ուրիշ կերպ կվարուեմ. բաց կա-

նեմ երեսիս վարագոյրը և այնպիսի խօսքերով  
նորան յետ կուղարկեմ, որ եկած ճանապարհը  
մոռանայ Օ... դու դեռ չգիտես ինձ... մինչև  
անգամ իմ ոտս կկտրեմ նորա տանից... Ի հարկ  
է, այնքան բարի կլինես, որ ինձ կպաշտպանես  
և չես թողնիլ փողոցում մնալ. ապա թէ ոչ  
հաւատա որ՝ իմ դրութիւնս շատ դժուար կը-  
լինի:

Տ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

Միամիտ կաց, միամիտ,  
ցես մնալ դու փողոցում:  
Պաշտպանութիւն կգտնես  
իմ այս փոքրիկ խրճիթում:

Քեզի համար դռներս  
կրնկի վրա միշտ բաց են,  
Քեզ ընդունել, պաշտպանել՝  
Ամեն թույլ պատրաստ եմ:

Դու կգտնես այս տան մէջ  
ժպիտ, ծիծաղ, քաղցրութիւն...  
Սիրոյ ժամեր... թույլներ...  
Մեզ կաւետեն միութիւն:

Միտոս, անձս և հոգիս  
ես պատրաստ եմ քեզ զոհել:

Երբ իմանամ, որ իմն ես  
Եւ դու իմն ես ան արգել:

ԱՐՏԻԻՐ

Եւ մի՞թէ կասկած կարող է լինել Ես քոնդ  
եմ և դու իմն ես և ոչինչ արգելք չէ կարող  
լինել Մի՞թէ դու դեռ ես կասկածում ես,  
որ հօրիցս ես կվախենամ:

Տ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

Բայց գիտե՞ն. այսօր երեք անգամ ձեր ծա-  
ռային հայրդ ուղարկել է քո ետեւիցդ:

ԱՐՏԻԻՐ, թութք կպած:

Իմ ետեւից:

Տ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

Երեք անգամ:

ԱՐՏԻԻՐ

Իսկ դու ի՞նչ ասացիր նորան:

Տ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

Առացի որ այստեղ չես և ամեն անգամ էլ  
այսպէս ճանապարհ դրեցի:

ԱՐՏԻԻՐ

Յետոյ:

Տ ՅՈՎՍԷՓԵԱՆ

Եւ ի՞նչ յետոյ: (Մեջ) Կարծես թէ սիրտս  
վկայում է, որ այս անգամ հայրդ, ինքը կգայ:

ԱՐՏԻՐ

Ի՞նչու... ինչո՞ւ ես այդպէս կարծում... Ա-  
սումես, երե՛ք անգամ էր ուղարկել ծառայի՞նս

Տ ՅՈՎՍԷՓԵԱՆ

Այո՛, երե՛ք անգամ: (Նայելով աչքի՞ն) Հը՛,  
ինչո՞ւ շփոթուեցիր: Գեռ հայրդ, որ չէ եկել՝  
այդպէս վախեցար, շփոթուեցիր, իսկ եթէ...

ԱՐՏԻՐ, իրան չկտրելով:

Ինչպէս թէ «վախեցար»... ո՞վ «շփոթուեց»:

Տ ՅՈՎՍԷՓԵԱՆ

Զէ՛, Արտիւր. ես քեզանից կասկածում եմ:

ԱՐՏԻՐ, շփոթմունքը զսպելով:

Ի՞նչպէս թէ կասկածում ես... ինչո՞ւ հա-  
մար... Ես եմ շփոթվում... Ես... Ես եմ վա-  
խենում... Ախ, երանի թէ գար, և համոզուե-  
իր թէ ես բոլորովին չեմ վախենում. և նորան,  
մինչև անգամ, ճանաչել չեմ կամենում: Ես, որ  
տեղի ընկնի, գիտե՞ս ինչ կանեմ (Գ. Յովնէֆէանը  
նայում է շատ հոգեկոտոր) Կթեպրեմ, Աստուած վկայ

է՛ Կթեպրեմ... Կաշուահան կանեմ... Նա կա-  
րող է իմ դէմ այսպիսի բանում հակառակել:

Զեմ լսիլ և մի խօսք.

Կասեմ, որ սիրել եմ

Եւ սիրոյս մատանին

Ես սրդէն տուել եմ:

Կխղնրեմ մեզ օրհնի,

Որպէս հօր՝ կաղաչեմ,

Հակառակ դէպքերում՝

Ճանաչիլ ուղիլ չեմ:

Իսկ եթէ չտրացա՛մ

Ես դնչին կխրեմ

Եւ իսկոյն ճանապարհ

Առաջը կդնեմ:

Տեսնենք ի՞նչ պիտ' անի

Այդ դէպքում նա իմ դէմ,

Երբ սրտով զինուորուած

Կկանգնեմ դէմ առ դէմ:

Տ ՅՈՎՍԷՓԵԱՆ

Արտիւր, ասացի, որ սիրտս վկայում է: Հայրդ  
աւղիղ որ գալիս է տե՛ս: Երևի այստեղ է գա-  
լիս: Հիմայ քեզ տեսնենք:

ԱՐՏԻՒՐ, շտապար և շիրթուած:

Հայր... ուղիղ... (նայում է շտապարին)  
Ա՛յ, ա՛յ, ա՛յ... Թագուհի ջան, ուղիղ որ դա-  
լիս է: (Նայում է այս և այն կողմ, համեմատել ծած-  
կում է) Սպասիր... լաւ կլինի որ ես գնամ:

Տ. ՅՈՎԱԷՓԵԱՆ

Ո՛ւր, ո՛ւր ես կամենում գնալ:

ԱՐՏԻՒՐ

Ո՛չինչ, կամենում եմ հեռանալ. թող նա ինձ  
այստեղ չտեսնի:

Տ. ՅՈՎԱԷՓԵԱՆ

Հա՛... Ուրեմն վախեցար... Ո՛ւր մնացին քո  
մեծախօսութիւնները: Այդպէ՞ս պիտի թեպ-  
րէիր:

ԱՐՏԻՒՐ

Չէ՛, հոգեակ ջան, ինչո՞ւ եմ վախենում...  
այսինքն... մի փոքր սիրտս է դողում, թէ չէ  
ինչո՞ւ պիտի վախենամ:

Տ. ՅՈՎԱԷՓԵԱՆ մի փոքր արհամարհանքով:

Հա՞... չես վախենում, միայն սիրտդ է դո-  
ղում, հա՞... Ես չեմ թողնիլ, որ ոտդ տանից  
դուրս դնես: Այստեղ մնա, և տեսնեմ թէ ինչ-  
պէս չես վախենում:

ԱՐՏԻՒՐ

Բայց...

Տ. ՅՈՎԱԷՓԵԱՆ

Բայց այստեղ պիտի մնաս:  
(Չենեակի դուռը ձեծամենն):

ԱՐՏԻՒՐ

Ա՛յ, ա՛յ...

(Տիկին Յովսէփեանը գնում է դուռը բանալու: Արտիւրը,  
թաքն կպած, այս և այն կողմ է ընկնում և, վերջապէս, մըտ-  
նում է թախտի տակ):

ՏԵՍԻՒ Բ

ԳՐԻԳՈՐ ՅԱԿՈՎԲԵԱՆ, Տ. ՅՈՎԱԷՓԵԱՆ և ԱՐՏԻՒՐ թախ-  
տի տակ:

ԳՐ. ՅԱԿՈՎԲԵԱՆ, ներս մտնելով:

բարե ձեզ, տիկին:

Տ. ՅՈՎԱԷՓԵԱՆ

Ախ բարե ձեզ. շատ ուրախ եմ տեսնել ձեզ  
իմ տան մէջ, Համեցէք, համեցէք խնդրեմ,  
նստեցէք: Ես ձեզ հետ շատ կարեւոր գործ էլ  
ունեմ:

ԳՐ. ՅԱԿՈՎԲԵԱՆ

Ներողութիւն, տիկին, նստելու միջոց չու-  
նեմ ես շատ շտապում եմ, ասացէք խնդրեմ,  
ձեզ մօտ է մեր փուչ Յարութիւնը:

Տ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

Արտիւրը... (շփոթած) Ոչ, ինձ մօտ չէ  
այժմ:

ԳՐ. ՅԱԿՈՎԲԵԱՆ

Իսկ այսօր, ամբողջ օրը:

Տ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

Այսօր... այո՛, այսօր ինձ մօտ էր:

ԳՐ. ՅԱԿՈՎԲԵԱՆ

Ի՞նչ էր շինում նա ձեզ մօտ:

Տ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

Ոչինչ. ինձ սովորեցնում էր իմ դերս, որ բա-  
ւական դժուար է. ցոյց էր տալիս ձեզ.—ներ-  
կայացումը շատ շուտ է նշանակուած:

ԳՐ. ՅԱԿՈՎԲԵԱՆ

Ո՛չ, իսկ ես ինչպէս իմացայ՝ նա բոլորովն  
ուրիշ նպատակաւ է եկել ձեզ մօտ. բայց ին-  
չո՞չ չեկաւ, երբ երեք անգամ ուղարկեցի նորա  
ետեկից ծառային:

Տ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

Ասեմ ինչու: Յուսով եմ, որ ուրախութեամբ  
կրնգունէք այն լուրը, որ ես ձեզ հիմա պիտի  
հաղորդեմ:

ԳՐ. ՅԱԿՈՎԲԵԱՆ, առանձին:

Մի գուցէ արդէն մատանին տուել է:

Տ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

Ձեր որդին կամենում է նշանուել:

ԳՐ. ՅԱԿՈՎԲԵԱՆ

Նշանուել... ո՞ւմ վերայ:

ԱՐՏԻՍԻ, Թախտի տակից զլջխը երեսցնելով, առանձին:

Այ, այ, ... ինչ շուտ սկսեց:

ԳՐ. ՅԱԿՈՎԲԵԱՆ

Բայց նա զեռ փոքրէ. ի՞նչպէս կարող է նշա-  
նուել, պատկուել և վերջապէս առա՛նց իմ հա-  
մաձայնութեան և օրհնութեան:

Տ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

Հենց դորա համար էլ (խաշելով Յակոբեանի քե-  
տը եւ համբարելով) խնդրում եմ իմ և նորա կող-  
մից ձեր համաձայնութիւնը և օրհնութիւնը:

ԳՐ. ՅԱԿՈՎԲԵԱՆ

Ինչպէս թէ... Դո՛ւք... Հասկանո՞ւմ էք ձեր  
արածը... վերջապէս դուք նորան գրաւեցիք:

Տ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

Ո՛չ, նա՛ ինձ գրաւեց. նա՛ հանեց ինձ իմ

խաղաղ գրութիւնից:

ԳՐ. ՅԱԿՈՎԲԵԱՆ

Բայց ի՞նչպէս էք համաձայնում, երբ նա ձեր որդու տեղն է... մի՞թէ ներելի է ձեզ, ձեր այդ վարմունքը: Դուք ինձ, համարեա, թէ հասակակից կին էք—հասկանում էք՝ թէ չէ:

Տ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

Այդ նորա բանն է: Բայց սիրոյ առաջ ոչինչ չէ կարող գէմ կենալ—սէրը զօրեղ է:

ԳՐ. ՅԱԿՈՎԲԵԱՆ

Սէ՛րը որն է. ի՞նչ սէր, ի՞նչ բան: Ես հասկանումեմ սէրը, բայց այնպիսի մարդոյ, որն արդէն չափահաս է, հասկացող է, ճիշտ գաղափարի տէր է. բայց ոչ այնպիսի մի երեխայի և թեթևամտի համար, որը դեռ գլուխն անգամ պահելու կարողութիւն չունի:

Տ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

Բայց ինձ ընդունելի է:

ԳՐ. ՅԱԿՈՎԲԵԱՆ

Իսկ ինձ ընդունելի չէ՛ և երբէք չեմ կարող ընդունել:

Տ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

Դուք ի՞նչ կարող էք անել, երբ նա արդէն ընդունել է և տուել է ինձ այս մատանին:

ԳՐ. ՅԱԿՈՎԲԵԱՆ

Մատանի՛ն... Օ՛հ, այլ ևս չեմ կարողանում սանձել ինձ՝ ոտներս թուլանում են: (Յեթ ու յեթ գնալով, ընչո՞ւմե՛ լախարի վերայ: Թախարի մի հոտը հոտորումէ՝ այնպէս որ Յաշովբէտնը ընչո՞ւմե՛ աւելի Արախարի վերայ, որը շատ վատ սեղմաւելով և վախից գոռո՞ւմ է):

ԱՐՏԻՐ

Ա՛յ, ա՛յ, ա՛յ...

ԳՐ. ՅԱԿՈՎԲԵԱՆ, զարմացած, վեր թռչելով:

Ա՛յս ինչ կնշանակէ... (Թախարի պաշին, Արախարի ախնձը Բաճաճ, դուրս է հանում): Ուրեմն այդպէ՛ս... (Տեսնելով նորա չիւի վերայի պանակէն և խիստ Բարիպաճ) Ա՛յ տղայ, դու խալխի թախտերի տակն ես մտնում և պանսնէդ աչքե՛րիդ... Քանի անգամ եմ ես քեզ ասել. դէն զգիր այդ յիմար խաղաղեքը. (Արախարը վերջնումէ չիւի պանսնէն) քանի անգամ եմ ես քեզ ասել. անյետացրո՛ւ այնպէ՛ս որ ել չը տեսնեմ. իսկ դու կրկի՞ն... Դորանո՞վ ես այս-

պիտի կանանց խելքը գրաւում և նշան դը-  
նում... մատանի տալիս... ես վերջ կտամ,  
այո՛, վերջ կտամ շուտով քո այդ ցնորամիտ,  
գոռոզ և թեթեամիտ վարմունքներով, շուտով...  
այնպէս խաղ խաղամ ես քո զուէր, որ մինչև  
անգամ երազած չլինես, սպասի՛ր... Իսկ մինչև  
այդ՝ դուրս կորիր... այս բոպէիս դուրս կորի՛ր,  
որ քո շուքը այսուհետև չերեայ այստեղ,  
Հասկանո՞ւմ ես:

#### Տ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

Ի՞նչպէս թէ «դուրս»... Ի՞նչ իրաւունքով...  
Զգիտէ՞ք, որ դուք իմ տան մէջն էք... չգիտէ՞ք,  
որ այս իմ տունն է:

#### ԳՐ. ՅԱԿՈՎԲԵԱՆ

Քայց առ (ցայց առնով Արտիւրին) իմ որդի՛ս է:

#### Տ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

Իսկ իմ նշանածս է:

#### ԳՐ. ՅԱԿՈՎԲԵԱՆ, Բոյնսուր:

Նշանածդ է... և դու՛ յանդգնում ես այդ-  
պէս ասել... Դի՛ թէ այդ խօսքը վայելէ քեզ...  
Դու այդպիսով արատաւորում ես կանացի ա-  
մնունքը: Ցայդ աստիճան չէի ուզում քեզ ա-  
նից:

#### Տ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

Ես ի՞նչ անեմ, երբ Արտիւրդ  
ինձ գրաւեց, ինձ զերեց  
Եւ մատանին զօրով, ուժով,  
Որպէս նշան ինձ տուեց:

Այժմ ո՛ւշ է, պէտքէ ասել,  
Հակառակիլ կարող չէք,  
Թէ ակամայ և թէ կամաւ՝  
Պիտի նշանն այս օրհնէք:

(Արտիւրին)

Արեմն, Արտիւր, մեր հօր աստա՞յ  
Որպէս որդիք ե՛կ, չըբենք  
Եւ նորանից աէ՛ր, օրհնութիւն  
Խնդրե՛նք, մաղթե՛նք, աղաչե՛նք:

(Արտիւրը չգոթաւած է)

#### ԳՐ. ՅԱԿՈՎԲԵԱՆ, քաղաքացած:

Ի՞նչ օրհնութիւն և կամ ի՞նչ աէ՛ր  
Սպասում էք ինձանից  
Պիտի ցանկալ ձեզ սե՛ր, մա՛հ...  
— Այս է բոլսում իմ որդից:

(Արտիւրին)

Դուրս կորիր շուտ այստեղից դու,  
Այս թովչուհուց հեռացիր:

Ապա թէ ոչ ես կ'թափեմ

Գլխիդ շանթեր: — Իմացիր:

(Արտիւրը, վերցնելով գլխարկը, կամենումէ փախել հօր  
չարադէմ հայեացքից, բայց Տ. Յովսէփեանը կանգնէցնումէ):

Տ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

Ո՛ւր ես, դնում, Արտիւր. ո՛ւր ես փախչում.  
ո՛ւր մնաց քո խրոխտալը: Ինչո՞ւ դու իմ խա-  
ղաղ դրուժիւնս վրդովեցիր: Քեզ ո՞վ էր ա-  
սում, եթէ այդպէս վախկոտ երեխայ ես, չոքել  
առաջս և խնդրել իմ սէրս... ո՞վ էր քեզ խընդ-  
րում:

ԱՐՏԻՒՐ

Դէ ես ի՞նչ անեմ... որ հայրս...

Տ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

Հայրդ... Դու վախենում ես հօրիցդ... Մո-  
ռանում ես քո բերած օրինակները—լեւին,  
Մէհրիմէին և միւսներին, որոնցով ինձ խաբե-  
ցիր, սէրս առա՛ր. մոռանում ես խոստում-  
ներդ և երեւակայած քաջութիւններդ...  
Հիմայ վախենում ես հօրիցդ... Ուրեմն վախե-  
ցիր և ինձնից. յիշի՛ր Օսելլօի արածը, վախ-  
կոտ նապաստակ:

ԱՐՏԻՒՐ

Դէ ի՞նչ անեմ, լա՛ւ. դու ի՛նքդ ասա: Ինչ-  
պէս անեմ, որ լաւ վերջաւորու՛թիւն ստանայ  
այս:

Տ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

Բռնիր ձեռքս, միասին չոքենք և կրկին խընդ-  
րենք նորանից մեզ խղճալ. իսկ եթէ չի լսիլ  
—սէր կամ մահ:

ԱՐՏԻՒՐ, մի փոքր փտահաղած:

Տուր ձեռքդ. այս էլ փորձենք. (Բռնում է պիշ-  
տոլ չեռքը և չորում էն Գրիգոր Յոշով Բէտնի տոռը):

ՄԻԱՍԻՆ

Վերջին անգամ խնդրումենք համաձայնու-  
թիւն և օրհնութիւն:

ԳՐ. ՅԱԿՈՎԲԵԱՆ, բարկացած, Արտիւրին:

Տօ, դո՛ւրս, ես քեզ ասումեմ, ապա թէ ոչ,  
կվերցնեմ փայտս և մինչև տուն մէկ կհալա-  
ծեմ քեզ:

(Նոքա վեր են կենում):

Տ. ՅՈՎՍԷՓԵԱՆ, Արտիւրին, ծածուկ:

Սէ՛ր կամ մահ:

ԱՐՏԻՒՐ, ասելի սիրտ առած, պաննէն նորէն դնում է աջ-  
քելին և, շատ վաւեր զիրք բռնելով, ահա ձեռա-  
քը երկար պահելով, կամենում է վախճանել  
հարը և յոյց տալ նորան իր որոշմանքը:

Սէր կամ մահ:

(Տիկ. Յովնէփեանը ուրախ զիրք է ընդունում, իսկ Յակով-  
բեանը, այս յանդգնութիւնը տեսնելով, մոլորվում է):

ԱՐՏԻՒՐ, դռող:

Որոշեցէ՛ք այս երկուսից մէկը:

ԳՐ. ՅԱԿՈՎԲԵԱՆ, ապտակելով՝ Սրտիւրին:

Այս քեզ սէ՛ր, այս էլ քեզ մահ... Ահա  
իմ որոշմանքս: ԳՐ. լրա...

(Այսօրը շփոթուած և յափշտակուած հօր երկկողով որը  
տեղի սաստկանում է ապտակներէլից, մոռանում է ամեն բան և  
հազիւ իրեն դուրս է գցում: Գնում է նորա ետեից և հայրը):

Տ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ, կրտսերած, Արտիւրի ետեիցը:

Արտի՛ւր... Արտի՛ւր...

(Արտիւրը):

